հեա՛ զսոսա ամենազաւր աջովդ քո, պարսպեա՛ զնոսա ամրութեամբ սուրբ Հոգւոյդ քո, մխիթարեա՛ զսոսա ուրախութեամբ բանի քո. զխաղաղութիւն քո տո՛ւր սոցա եւ աճեցո՛ ի սոսա զշնորհսն»:

19 Եւ այսպէս աւրհնեալք զերանելի կապեալսն եւ հզաւր ամենակալին յանձնեալ՝ ասեն. «Նա պահեսցէ զձեզ ողջս, եւ Հոգւովն իւրով սրբով մխիթարեսցէ զձեզ հանապազ: *20* Եւ դուք մի՛ տրտմիք, այլ ուրախութեամբ ուրախ լերուք յայն որ ասացն, թէ *Ոչ թողից զձեզ որբս. գամ, ասէ առ ձեզ*[ա]. որ եկեալ իսկ է եւ է ի միջի ձերում. որ արձակէ զձեզ ի կապանացդ յորում էքդ[1], եւ պահեսցէ զձեզ յուսով աւգնականութեան իւրոյ եւ տայ ասել ձեզ համարձակաձայն պարծանաւք, թէ *Վասն քո մեռանիմք զաւրհանապազ. համարեցաք որպէս զոչխար*[2] *ի սպանդ*[ա]: *21* Եւ ամենատէրն խորտակէ զսատանայ ի ներքոյ ոտից ձերոց, երեւելիս եւ պայծառս ցուցցէ զձեզ ի մէջ ազգիս ամբարշտի, եւ[3] դարձուսցէ զձեզ ի յերկիր ձեր: *22* Պահեսցէ զտունս ձեր, սնուսցէ զտղայս ձեր, ժառանգեցուսցէ զաւակի ձերում զվիճակ հարց իւրեանց. նմա փառք եւ այժմ եւ յամենայն յաւիտեանս. ամէն»:

23 Եւ կատարեալ սրբոյն Ղեւոնդի զբանս վարդապետութեան եւ մխիթարութեանս այսորիկ՝ ըստ հրամանին սրբոյն Յովսէփայ[4] եւ սրբոյն Սահակայ, որոց եւ նոցա աւրհնեալ զերանելի նախարարսն եւ զայլ ժողովեալսն ընդ նոսա՝ յանձնեցին զամենեսեան սրբոյ Երրորդութեանն, եւ կատարեցին զաղաւթս: *24* Եւ եղեւ ամենայն անձն երանելի կապելոցն նախարարացն որպէս զանձինս այնոցիկ, որք ժողովեալ էին ի վերնատունն եւ բնակէին ընդ սուրբ առաքեալսն, լցեալք սուրբ Հոգւոյն շնորհիւ, քաջալերեալք եւ ապաւինեալք ի յոյսն երկնաւոր:

ԾԲ. Եւ մինչդեռ ուրախացեալ ցնծայր ամենայն խոհարան լսողացն, որպէս բազմախորտիկս անուշահոտ ճաշակաւք, հոգեշնորհ վարդապետութեամբ առաքելանման վարդապետացն՝ գային հասանէին յանկարծակի բազմութիւնք դահճացն յամբարապետէն, ջահիւք բազմաւք սաստկապէս լուցելովք. քանզի ըստ անանց եւ անփոփոխ ձայնարձակութեան յաստուածային հրամանատուութենէն[5] թռչնոյ՝ ժամ էր այնուհետեւ հաւուն խաւսելոյ. ունելով ընդ ինքեանս բազմութիւն դարբնաց գործուվք[6] արուեստաւորու-

---

ա Յովհ. ԺԴ 18

1 *Ամտ.* յորում էքք

2 *Ձ.* որպէս զոչխարս

ա Հռոմ. Ը 36

3 *ՁԱմտ. չիք* եւ

4 *ԲԳտ. այստեղ եւ յետոյ՝* Յովսեփայ

5 *Ձ.* հրամանատութենէն

6 *Ձ.* գործովք